ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԲՄԾՁԲ-7/3-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 08.05.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 21.03.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/3-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2 388 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 15.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Զ. Սարկավագի 157**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Արարատբանկ» ԲԲԸ**
Հ/Հ 900011144079	**Հ/Հ 1510023294810100**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 00803554**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	**Տնօրեն**
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

ВА 3119999
Հ/Կ 000009759

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible] գին	[illegible]	Գնման ժամանակացույց, ըստ 2018թ. ամիսների, ոչ ուշ քան 10.12.2018թ.							
	[illegible]	[illegible]	[illegible]			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	98391120/328	Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր (լրակազմ)	Լ-կ	35 000	15	ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ							
2	98391120/329	Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր (լրակազմ)	Լ-կ	35 000	21	ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ							
3	98391120/330	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր (լրակազմ)	Լ-կ	15 000	21	ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ							
4	98391120/331	Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)	Լ-կ	60 000	9	ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ							
5	98391120/332	Կոստյում բամբակյա կեպիով, անհատական պատվեր (լրակազմ)	Լ-կ	7000	39	ԸՍՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման պետական պաշտոնյա

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ԱԶԱՏՅԱՆ

BA3115999

Հ/Ա 00009753

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
2	[illegible] անհատական պատվեր (լրակազմ)	245 000	245 000	490 000	490 000	490 000	735 000	735 000	735 000
3	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր (լրակազմ)	105 000	105 000	210 000	210 000	210 000	315 000	315 000	315 000
4	Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)	180 000	180 000	360 000	360 000	360 000	540 000	540 000	540 000
5	Կոստյում բամբակյա կեպիով, անհատական պատվեր (լրակազմ)	91 000	91 000	182 000	182 000	182 000	273 000	273 000	273 000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

ԲԱ 3119999
ՀՀ 00009753

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-7/3-2

ք. Երևան

21.03.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի Պ.Ժ.Կ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Քանաքեռ Կարի ֆաբրիկա» ՀՁԲԸ-ն, ի դեմս ընդհանուրության տնօրեն Ա. Ազատյանը, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, իսկ Պատվիրատուն ստանձնում է մատուցված ծառայությունների դիմաց վճարելու (հավելված N 2) պարտավորությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի ենթամամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում 2 388 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(եռօրյա) ամսից ասելով, ապա նշվածներից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերը ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով նախատեսված պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերու իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագրերը կազմված է 12 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը, լրացնելով նրանց տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00803554
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

ԲՄԾԲ-7/3-2 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	չափման միավորը	քանակը	միավորի գինը	ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	մատուցման ժամկետը
1	Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր (լրակազմ)	լ-կ	15	35 000	525 000	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում
2	Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր (լրակազմ)	լ-կ	21	35 000	735 000	
3	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր (լրակազմ)	լ-կ	21	15 000	315 000	
4	Բաճկոն ծմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)	լ-կ	9	60 000	540 000	
5	Կոստյում բամբակյա կեպիով, անհատական պատվեր (լրակազմ)	լ-կ	39	7000	273 000	

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Գեներալական հանդերձանք

1. **Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր (լրակազմ)** Կիտելը՝ բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով:Լանջափեշերը կոճկվում են չորս՝ ՀՀ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համածուլվածքից կոճակներով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու՝ ՀՀ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համածուլվածքից կոճակներով իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, ասեղնագործված դափնու ճյուղերով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված:Աստառը՝ԳՕՍՏ-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից:Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծոցագրպան:

Ազատող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահոդից երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպաններ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ԳՕՍՏ-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:

Կոստյումը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն ՝ ԳՕՍՏ-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Պատվիրատուի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակներ 22մմ և 14մմ ոսկեգույն ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան, դափնետերև:

Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

2. Կոստյում՝ **կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր (լրակազմ)** Կիտելը՝ բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ վրձքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով:Լանջափեշերը կոճկվում են չորս՝ ՀՀ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու՝ ՀՀ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, ասեղնագործված դափնու ճյուղերով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված:Աստառը՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն կտորից:Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծոցագրպան:

Ազատթող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպասներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:

Կոստյումը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ, 1մ2 մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:

Պատվիրատուի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակներ 22մմ և 14մմ ոսկեգույն ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան, դափնետերև:

Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

3. **Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր (լրակազմ)** Բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կետրոնական շղթայական, կոկետկայով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու ՀՀ զինանշանի պատկերով, պաշտպանական գույնի 14 մմ, ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Մեջքը կոկետկայով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, ՀՀ զինանշանի պատկերով, պաշտպանական գույնի 14 մմ, ալյումինե համաձուլվածքից երկուական կոճակներով կոճկվող բազկակալներով: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար:

Ազատթող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպասներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲШ արտիկուլի կամ համարժեք գործվածքից դեղնականաչավուն գույնի աստառացու:

Բաճկոնը և տաբատը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ, 1մ2 մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:

Պատվիրատուի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակ 14մմ պաշտպանական գույնի, կոճակ 14մմ պաշտպանական գույնի ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

4. **Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)** ԳOUS-20176-84: Բաճկոնը մշակված է տաքացնող սինթետիկ ներդիրով, հանովի բնական մորթե օձիքով և ներդիրով: Թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում գոտկատեղից ներքև մշակված է վրանկար կրկնակի գրպաններ կափույրներով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են կոճկվում են գաղտնի կոճկվածքով, 2 օղակ կոճակով:

Բաճկոնը ունի ներկարված երկկարանի թևքեր: Թևքերի բազկամասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2 կոճակներով:

Բաճկոնը կոճկվում է շղթայով, 5 կոճակօղակներով: Մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ուսամասերում մշակված են ուսադիրներ: Օձիքը ծալովի կտրված կանգունակով: Բաճկոնի աստառը մգդանկարված է սինտեպոնով, շեղանկյուն նարերով: Աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շեռտինով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով: Հանովի ներդիրը կազմված է լանջափեշերից և մեջքից, ներդիրը բաճկոնին ամրանում է շղթայով: Ներդիրի հակառակ երեսը մշակված է բիազով: Բաճկոնին կոճկվում է լրացուցիչ մորթե օձիք. բամբակյա աստառով և երկշերտ սոսնձապատ ներդիրով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ:Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 4 օղակներով և բաճկոնին կարված 4 կոճակներով: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

5. <u>**Կոստյում բամբակյա կեպիով, անհատական պատվեր (լրակազմ)**</u> Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից:

Բաճկոնը միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով 5 օղակ կոճակներով, որից վերևից առաջինը կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 4 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի փռված հատվածում եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված է վրադիր ծավալուն չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում ծավալուն, երկուսը՝ կողամասերում: Կրծքամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, 55 աստիճան դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա:Գրպանի լայնությունը 14,5 սմ, երկարությունը 17,5 սմ: Վրադիր գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով, 2 օղակ կոճակով: Կրծքամասի վրադիր գրպանների կափույրների վերնամասում կրծքանշանները փակցնելու համար կարվում է 13X 2.5 սմ չափի կպչուն ժապավեն:

Գոտկատեղում մշակված է, 4 սմ լայնության ներկարված 2 ախլակներ: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով:

Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կափույրի երկայնքով կոճկվում են, 2սմ լայնության կպչուն ժապավենով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0,5սմ լայնությամբ կարով: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում է 7,5 տրամագծով կպչուն ժապավեն:

Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 17,5 սմ, երկարությունը 16,5 սմ, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3 սմ բարձրության և համապատասխանաբար, աջ և ձախ փեշերի ուղղահայաց եզրերից՝ 8սմ հեռավորության վրա:Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ կոճակով: Գոտկատեղում մշակված են, 4 սմ լայնության ներկարված 2 ախլակներ՝ իրանի հարմարեցման չափերի կարգավորման համար: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով:

Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ:

Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Թևքերի ներքևի մասում մշակված են եռանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով:

Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են երեք օղակով և մեկական կոճակներով՝ կոճակները կարվում են պատաների վրա:

Տաբատը ուղիղ ձևվածքով, մշակված գոտիով, գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 7 գոտեմակօղակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներ: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ կոճակով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Տաբատի առաջամասում մշակված են՝ գրպանի ներքևի եզրից, (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0.7սմ լայնությամբ կրկնակի կարով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով:

Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծով, պատրաստված ջերմադիմացկուն (չհալվող) նյութից, չորս նարանցքեղով, եզրերը թեք անցյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական:

Կեպին աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում է սոսինձային միջադիրով: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Աստառի կողմից ճակատային մասին տեղադրված է 5.7X 4.5 սմ չափի կաշվե կտոր:

Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում է 35% բամբակյա և 65% պոլիէսթեր բաղադրությամբ գործվածքից: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (լվացքի 30° C ջրմաստիճանի, արդուկման և քիմմաքրման): Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին, ներքևից երեք սմ բարձրության վրա պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված տեսականու չափը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի պիտակ: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ք. Երևան Բագրևանդի 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011144079

ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի Պժկ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

ք. Երևան, Զ. Սարկավագի 157

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510023294810100

ՀՎՀՀ 00803554

Տնօրեն

Ա. ԱՀԱՍՅԱՆ

Անհատական պատվերի համար պատվիրատուի կողմից ըստ ապրանքատեսակների տրամադրվող նյութերի

ՑԱՆԿ

Կոդ	Ապրանքատեսակ	Տրամադրվող նյութերը	Մեխոսը միավորի համար
		ԴԵՆԵՐԱԼԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ	
1.	Կոստյում կիսաբրդյա կտորից, տոնական (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 22մմ ՀՀ զինանշանով 3. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով 4. կարմիր մահուդ 5. թևքանշան 6. ուսադիրներ 7. դափնետերևի լրակազմ՝ փայլ-1լ-կ /64 հատ/, կանիտել-6գր., տրաֆարետ-1զ-գ	1. 1.5 լայնքով 3.06գ/մ 2. 4 հատ 3. 4 հատ 4. 1.5 լայնքով 0.19գ/մ 5. 1 հատ 6. 1 զույգ, ըստ կոչման 7. 1 լ-կ
2.	Կոստյում կիսաբրդյա կտորից ամենօրյա (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 22մմ ՀՀ զինանշանով 3. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով 4. կարմիր մահուդ 5. թևքանշան 6. ուսադիրներ 7. դափնետերևի լրակազմ՝ փայլ-1լ-կ /64 հատ/, կանիտել-6գր., տրաֆարետ-1զ-գ	1. 1.5 լայնքով 3.06գ/մ 2. 4 հատ 3. 4 հատ 4. 1.5 լայնքով 0.19գ/մ 5. 1 հատ 6. 1 զույգ, ըստ կոչման 7. 1 լ-կ
3.	Բաճկոն/կուրտկա/ և տաբատ կիսաբրդյա (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 14մմ պաշտպանական գույնի 3. կարմիր մահուդ 4. թևքանշան 5. ուսադիրներ 6. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով	1. 1.5 լայնքով 2.86գ/մ 2. 6 հատ 3. 1.5 լայնքով 0.19գ/մ 4. 1 հատ 3. 2 հատ
4.	Բաճկոն ձմեռային մորքե օձիքով և ներդիրով	1. երեսացուի գործվածք	1. 1.5 լայնքով 2.7գ/մ
5.	Կոստյում բամբակյա, կեպիով	երեսացուի գործվածք	1.5 լայնքով 3.7 գ/մ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ք. Երևան Բագրևանդի 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011144079

ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

ք. Երևան, Զ. Սարկավագի 157

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510023294810100

ՀՎՀՀ 00803554

Տնօրեն

Ռ. ԱՐԱՏՅԱՆ

Հավելված N 2

ԲՄԾՁԲ-7/3- 2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	ծառայության անվանում	CPV ծածկագիր	
1	Կոստյում՝ կինաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր (լրակազմ)	98391120/328	**Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում**
2	Կոստյում՝ կինաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր (լրակազմ)	98391120/329	
3	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կինաբրդյա անհատական պատվեր (լրակազմ)	98391120/330	
4	Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)	98391120/331	
5	Կոստյում բամբակյա կեպիով, անհատական պատվեր (լրակազմ)	98391120/332	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ք. Երևան Բագրևանդի 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011144079

ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

ք. Երևան, Զ. Սարկավագի 157

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510023294810100

ՀՎՀՀ 00803554

Տնօրեն

Ա.ՅԱՉԱՏՅԱՆ

Հավելված 3

ԲՄՄՁԲ-7/3-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ սխեմայի ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

ԲՄՄՁԲ-7/3-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ _____-ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման

նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

_____ _____

ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____

ստորագրություն ստորագրություն